

ՀԱՅԿ. ԽՍՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Դոցենտ Ա. Բ. ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

# ԲԾԱՎՈՐ ՏԻՑ

(ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՆՍՊԱՐԶՆԵՐԸ  
ՅԵՎ. ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ)



616.9

Q-29

ՀՐԱՏԱՐԱԿ. ՀԵՍՀ ԱՌժՈՂԿՈՄՍՏԻ ՍԱՆ-ԼՈՒՍ ԲՍԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1937

616.9

Q-29

այ՛

ԴՈՑԵՆՏ ԲԺ. Ա. Բ. ԱՆԵԲՍԱՆՅԱՆ

## ԲԾԱՎՈՐ ՏԻՑ

(ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ  
ՅԵՎ. ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ)

Տեխն. ձեվ. յեվ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԳՅԱՆ



1454  
38

Բժավոր տիֆի լիկվիդացիան, նրա հնոցների լիակատար վոչնչացումը մի ուեալ և անպայման լուծելի խնդիր է հանդիսանում:

Բժավոր տիֆի դեմ մղվող պայքարին պետք է մասնակից անել վոչ միայն առողջապահական որդաններին, վոչ միայն պետական որդաններին, այլև բոլոր հասարակական կազմակերպություններին և առաջին հերթին այն բոլոր կազմակերպություններին, վորոնք առնչություն ունեն բնակչության կուլտուրական մակարդակը բարձրացնելու և կենցաղային պայմանները բարելավելու գործի հետ:

Բժավոր տիֆը կենցաղային վարակիչ հիվանդություն է: Նա սերտ կերպով կապված է կուլտուր-կենցաղային պայմանների հետ:

Բժավոր տիֆը մարդու տարածված հիվանդություններից մեկն է հանդիսանում:

Ինչպես հայտնի յե բժավոր տիֆը սուր վարակիչ հիվանդություն է: Այդ հիվանդությունը յերկար չի տևում, այլ միանգամից սկսվելով, վորոշ որեր անցնելուց հետո վերջանում է և սովորաբար այլևս չի կրկնվում: Այդ հիվանդությունը վարակիչ է այն պատճառով, վոր վարակը մարդուն անցնում է մարդուց:

Բժավոր տիֆը պատերազմներին ուղեկից հիվանդություն է, ուստի այդ տիֆը նաև պատերազմական տիֆ է կոչվում: Անջնջելի կերպով մեր բոլորիս գիտակցության մեջ տպավորվել են իմպերիալիստական պատեր-

ըրգմի ժամանակվա բժավոր տիֆի բոլոր սարսափները:

Գիտությունը սովորեցնում է մեզ, վոր այդ հիվանդությունը հեշտությամբ կարող է առաջանալ և տարածվել հակասանիտարական պայմաններում գտնվող հանրակացարաններում և բնակելի բարակներում, վորտեղ վոլլտություն է նկատվում, բուժական հաստատություններում, հակառողջապահական պայմաններում գտնվող իջեփաններում, գիշերային ապաստարաններում և այլ վայրերում, վորտեղ մարդկանց կուտակում է լինում և վորտեղ վոլլտություն է նկատվում: Ահա այդ բոլոր տեղերն ու հաստատություններն այն հողն են հանդիսանում, վորտեղ բժավոր տիֆն աճում և զարգանում է:

Այդ բոլոր տեղերումն էլ բժավոր տիֆը առաջանում ու տարածվում է շնորհիվ վոլլտության, այնտեղ, վորտեղ վոլլիներ չկան, այնտեղ էլ բժավոր տիֆ չի կարող լինել: Վոլլիներով վոլլիներին, մարդու համար այնքան վտանգավոր պարագիտներին, մենք դրանով էլ հենց հանգցրնում ենք բժավոր տիֆի հրդեհը, նա, ում կծել է բժավոր տիֆով վարակված վոլլիը, բժավոր տիֆով հիվանդ մարդու վոլլիը, սովորաբար հիվանդանում է բժավոր տիֆով Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բժավոր տիֆի տարածումն ամբողջապես կախված է պարագիտներից, այն է՝ վոլլիից, ուտի և բժավոր տիֆը կրում է նաև պարագիտար տիֆ, կամ վոլլիի տիֆ անունը:

Յեթե մենք վերևում վոլլիներին մեղադրում էյինք բժավոր տիֆ տարածելու համար (իսկ այդպիսի մեղադրանքը մենք միանգամայն արդարացի կերպով ենք բարդել վոլլիներին վրա) ապա և այն դեպքում, յերբ մեկին կծում է բժավոր տիֆով վարակված վոլլիը, նա պետք է սպասի, վոր հիվանդանալու յե բժավոր տիֆով:

Վոլլիի կծելուց հետո անմիջապես բժավոր տիֆ չի

առաջանում, այլ պետք է վորոշ ժամանակ անցնի, սովորաբար 12—14 որ կծելուց հետո (յերբեմն մի քանի որ ավելի կամ պակաս այդ ժամանակամիջոցից) և հիվանդությունն արտահայտվում է: Այնպես վոր ստացվում է հիվանդության յուրատեսակ գաղտնի մի շրջան, յերբ վարակը մտնելով որգանիզմի մեջ վորոշ ժամանակամիջոցում հասունանում է և ապա տալիս բժավոր տիֆ հիվանդության իսկական պատկերը: Հիվանդության այդ գաղտնի շրջանը (այլ կերպ՝ այդ շրջանը ինկուբացիոն շրջան է կոչվում), սովորաբար վոլլ մի բանով իրեն ցույց չի տալիս և միայն այդ ժամանակաշրջանն անցնելուց հետո հիվանդությունն սկսվում է միանգամից: Հաճախ լինում են դեպքեր, յերբ մարդ աշխատանքից տուն վերադառնալով, կամ վորևե տեղ շփվելով վոլլտո մարդկանց հետ և տուն գալով, 12—14 որից հետո հիվանդանում է բժավոր տիֆով: Սկզբում նա մրսում, դողում է հետո գլխացավ է սկսվում:

Նրա մարմնի ջերմաստիճանը սովորաբար միանգամից բարձրանում ու հասնում է մինչև 39—40 և էլ ավելի աստիճանի և այդպիսով բարձր, վորոշ աննշան տատանումներով միայն, մնում է 14 որ: Սակավ դեպքերում ջերմությունը հիշյալ աստիճանի վրա մնում է 14 որից քիչ ավելի կամ պակաս: Հիվանդությունն սկսվելուց 4—5 որ հետո հիվանդի մարմնի վրա, մասնավորապես կրծքի, ձեռքերի, վոտքերի և նույնիսկ դեմքի վրա բծեր են յերևում կամ ինչպես ասում են՝ մարմինը «դուրս է տալիս»: Այդ բծերը մանր են, մոտավորապես գնդասեղի գլխի մեծության, կարմրագույն և միաժամանակ մաշկի մակերեսից քիչ բարձր: Յեթե այդ բծերը դուրս են յեկել, ապա դրանք տեսանելի յեն հասարակ աչքով:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բժավոր տիֆի

ժամանակ մարմնի վրա բծեր են առաջանում, ուստի և այդ տիֆը կոչվում է բծավոր տիֆ:

Հիվանդության ժամանակ գլխացավերը սաստկանում են, հիվանդը զառանցում է, գիտակցությունը կորցնում, անկողնից դուրս է թռչում և այլն:

Սովորաբար հիվանդությունն սկսվելուց 14 ու հետո շերմաստիճանը միանգամից իջնում է և հասնում 36 կամ 35 աստիճանի, պարզ է, վոր յեթե մի ուր առաջ հիվանդի շերմաստիճանը բարձր եր՝ այն է 40 աստիճան ավելի, յեթե դրանից հետո շերմաստիճանը միանգամից իջել ու հասել է 36-ի կամ 35-ի, ապա այդպիսի խիստ տատանումը բացասաբար է անդրադառնում սրտի վրա, իսկ յերբեմն մահ պատճառում այդ կրիտիկական մոմենտին: Այդպիսով, ինչպես ասում են, վրա յե հասնում հիվանդության կրիզիսը (ճգնաժամը), ծերերը, թույլ սիրտ ունեցողները, ալկոհոլիկները, վորոնք իրենց սիրտը մաշել, քայքայել են վոգելից խմիչքները գործածելով, սովորաբար դժվարությամբ են գիմանում բծավոր տիֆին, ուստի և այդ տարրերի մեջ բծավոր տիֆի առաջացրած մահացության 1/10-ը բավական մեծ է լինում: Իսկ յեթե հիվանդը չի մահանում, ապա նա միջին հաշվով կորցնում է 3 ամիս (յեթե բարդություններ չեն լինում, վորոնք յերբեմն հիվանդին բավական յերկար ժամանակ շարքից դուրս են բերում): Ուրեմն բծավոր տիֆով հիվանդացածը յերկու ամիս շարունակ կտրված է լինում արտադրությունից, իր առտրյա աշխատանքից, այստեղից արդեն պարզ է, թե ինչ չափով բծավոր տիֆը խանգարում էր մեզ քաղաքացիական պատերազմի ժամանակ, թե վորքան բացասաբար եր անդրադառնում նա մեր աշխատանքների վրա Խորհրդային Իշխանության առաջին տարիներում:

Հենց այդ ժամանակ շնորհիվ ձեռք առնված միջոց-

ների, շնորհիվ գործ դրված հերոսական ջանքերի, Խորհրդային Իշխանության առաջին տարիներում հաջողվեց հաղթահարել բծավոր տիֆի համաճարակը և հիմնականում լուծել խորհրդային յերկրի համաճարակային դրության խնդիրը: Այնուհետև համաճարակը, վորպես այդպիսին, այլևս յերեման չի գալիս և միայն հիվանդության յեղակի դեպքեր են նկատվում, դեպքեր, վորոնք ցարիզմի թողած ախուր ժառանգության՝ վոջլոտության արդյունքն էլին:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ մի քանի, թեկուզ կցկատուր տեղեկություններ տալ բծավոր տիֆի համաճարակի մասին Հայաստանի վերաբերմամբ, վորտեղ դաշնակցական տիրապետության ուրոք քայքայումը, սովը, աղքատությունը, գաղթականությունը և ազգամիջյան կռիվները համատարած յերևույթներ էլին և վորտեղ բծավոր տիֆն էլ իր բաժին գոհերը տարավ բնակչությունից:

Հայաստանում, Խորհրդային Իշխանության հաստատվելուց և բծավոր տիֆի համաճարակի դեմ կազմակերպված պայքար ծավալելու հետևանքով, բծավոր տիֆը զգալիորեն պակասեց և միայն յերբեմն եր յերևան գալիս այն վայրերում, վորտեղ վոջլոտություն կար: Հայաստանի անցյալի պայմաններում միանգամից վերացնել վոջլոտությունը, այդ անխուսափելի յերևույթը, իհարկե հնարավոր չեր: Վոջլոտության վերացման խնդիրը Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիներում անտարակույս կապված եր մի շարք դժվարությունների հետ, դա կապ ուներ յերկրի եկոնոմիկայի, ազգաբնակչության կուլտուրական մակարդակի հետ, դրա համար անհրաժեշտ եր աշխատավորների համապատասխան կադրեր ունենալ նաև առողջապահության ֆրոնտում:

Ուստի և դեռ տեղ-տեղ նկատվող վոջլոտությունը

բծավոր տիֆի յեզակի ղեպքեր եր առաջացնում: Բծավոր տիֆը մեզանում աստիճանաբար մարում է, այժմ միայն նրա թույլ կայծերն են յերևում: Անցյալ հազարավոր և տասնյակ հազարավոր ղեպքերը ներկայումս տեղի յեն տվել միայն մի քանի ղեպքերի:

Բայց հենց այդ յեզակի ղեպքերն էլ պետք է վերջանան: Բծավոր տիֆը պետք է իսպառ վերացվի մեր միջից: Նա բնավ չպետք է լինի անդասակարգ սոցիալիստական հասարակության մեջ:

Բծավոր տիֆով հիվանդանում են ամեն հասակի մարդիկ և վոչ վոք իրեն այդ տեսակետից ապահովված համարել չի կարող:

Ուստի և մեզանից յուրաքանչյուրը, ինչ տարիքի յել լինի, վորտեղ էլ աշխատելիս և ապրելիս լինի նա, միշտ պետք է հիշի բծավոր տիֆի վտանգի, միշտ պետք է հիշի վոչլուտվելու վտանգի մասին:

Տարվա մեջ կա վորոշ ժամանակաշրջան, յերբ բծավոր տիֆն առանձնապես մեծ չափեր է ընդունում, ուստի և տարվա այդ ժամանակ պետք է առանձնապես զգույշ և աշալուրջ լինել: Տարվա այդ շրջանը՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսներն են:

Այդ յերևույթը բացատրվում է նրանով, վոր մարդիկ հավաքված են լինում տներում, ընտանիքում, աճում է կուտակվածութունը, այնուհետև ձմեռը, մարդիկ ավելի սակավ են լողանում, սպիտակեղենը նույնպես սակավ է վացվում: Ահա այսպիսի պայմաններում վոչլուտութունն աճում է, իսկ զրա հետ էլ, ինչպես արդեն գիտենք, կապված է բծավոր տիֆը: Տարվա այդ ժամանակ վտանգավոր է և այն, վոր հեռվից յեկած մարդիկ իրենց հետ վոջիլ, հետևապես և բծավոր տիֆ են բերում, յեթե հարց ու փորձ արվի և պարզվի թե յեկողն ում հետ է

ճանապարհ յեկել, վորտեղից և ինչպես է յեկել, ապա պարզ կլինի թե ինչպես բծավոր տիֆը քոչում է մի տեղից մյուսը: Գաղնանամուտին բծավոր տիֆը դեռ տարածվում է ու զարգանում, միայն մայիսին սկսում է վերջանալ, յերբ մարդիկ սկսում են ավելի հաճախ լողանալ, յերբ տաք յեզանակների առնչությամբ կուտակվածութունը պակասում է: Ահա թե ինչով է բացատրվում բծավոր տիֆի սեզոնային ընթացքը:

Ինչպես է անցնում բծավոր տիֆի վարակը մեկից մյուսին: Այդ պետք է իմանան մեր աշխատավորության լայն զանգվածները: Յեթե անգրագիտութունն ամբողջովին վերացնելու հարց ենք դրել, ապա դրան զուգընթաց պետք է մասսաների մեջ սանիտարական հիգիենիկ սոփոութունները և գիտելիքներն էլ ավելի տարածել ու ամրացնել: Հարկավոր է, վոր մեզնից յուրաքանչյուրն իմանա, թե ինչպես պետք է կովել համաճարակային հիվանդութունների դեմ, տվյալ ղեպքում բծավոր տիֆի դեմ: Վերևում մենք ասացինք, վոր բծավոր տիֆի վարակը մեկից մյուսին անցնում է վոջիլների միջոցով:

Նիկոյլը, Կոնտը և Կոնսեյլը ապացուցեցին, վոր բացի վոջիլների կծելուց, նույնիսկ այն ղեպքում, յեթե մարդու մարմնի վրա բծավոր տիֆով վարակված վոջիլ է շարդվում և յեթե մաշկի համապատասխան տեղում կա վորեւ վընասվածք (քերծվածք, փոքր վերքեր և այլն), ապա այդ ղեպքում էլ բծավոր տիֆ է առաջանում: Այնուհետև հիշյալ հեղինակներն արել են այսպիսի մի փորձ հս. նըրանք վոջիլի ստամոքսը զատել են մյուս մասերից և եմուլսիա պատրաստելով սրսկել են կապիկներին — կապիկներն այդ ղեպքում հիվանդացել են բծավոր տիֆով:

Այսպիսով Նիկոյլը և իր աշխատակիցներն ապացուցել են, վոր մարմնի վոջիլը (հագուստի վրա գտնվող) բծավոր

տիֆլի վարակ տարածող եւ և, հետևաբար բժավոր տիֆոյ  
հիվանդից կարելի յե վարակվել միայն նույն հիվանդի  
վարակված վոշիլի միջոցով եւ այն ել գլխավորապես կը-  
ծելու միջոցով, սակայն լինում են դեպքեր, յերբ բժա-  
վոր տիֆոյ վարակվում են և վնասված մաշկի վրա վա-  
րակված վոշիլ ջարդելու միջոցով: Բժավոր տիֆոյ հիվանդ  
մարդու արյունը վարակ եւ պարունակում իր մեջ, ուստի  
և բժավոր տիֆոյ հիվանդի արյունը խիստ վարակիչ ե:

Այսպիսով իմպերիալիստական պատերազմից 5 տարի  
առաջ հիշյալ գիտնականներն ապացուցեցին և պարզա-  
բանեցին, թե ինչպես ե տարածվում բժավոր տիֆը և թե  
ինչն ե վարակիչը հիվանդի մեջ: Իմանալով այդ, միանգա-  
մայն հնարավոր եր հետագայում բժավոր տիֆի դեմ  
պայքարելու միջոցներ ձեռնարկել:

Սկսվեց իմպերիալիստական պատերազմը, բռնկվեց  
և տիֆը: Թե ինչպես ե տարածվում բժավոր տիֆը, այդ  
արդեն հայտնի յեր գիտությանը:

Բայց չնայած դրան, գերմանացի բժիշկ Գ. Ու-ն, վորը  
հիշյալ պատերազմի ժամանակ աշխատում եր տաճկական  
բանակում, 1915 թ. Թյուրքիայում մարդկանց վրա մի  
շարք փորձեր կատարեց, վորոնք գրեթե հանցագործու-  
թյան եյին հասնում: Այդ բժիշկը նախապես հայտնի բժա-  
վոր տիֆոյ հիվանդների արյունը սրսկել եր առողջ տաճիկ  
զինվորականներին (310 մարդու), վորոնցից 174 մարդ  
հիվանդացել եր բժավոր տիֆոյ, իսկ 48 մարդ մահացել:  
Հարց ե ծագում, անհրաժեշտ եր արդյոք նորից կրկնել  
այն, վոր արված և ապացուցված եր արդեն շատ վա-  
ղուց: Յեւ վերջապես իրավունք ունենք արդյոք նման  
փորձեր կատարել կենդանի մարդկանց վրա: Ինչ կարիք  
կար այդ անել, յեթե արդեն հայտնի յեր, վոր բժավոր  
տիֆոյ հիվանդ մարդու արյունը վարակիչ ե:

Համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանա-  
ցիներն իրենք գործ ունեյին բժավոր տիֆի համաճարա-  
կի հետ իրենց յերկրում, յերբ այդ համաճարակը գլխա-  
վորապես տարածված եր ռազմագերի ռուսների, ավս-  
տրիացիների և այլոց մեջ: Գերմանական բժիշկները դ-ր  
Յուրգենսի գլխավորությամբ ուզում եյին պարզել վոշիլ-  
ները դերը բժավոր տիֆի տարածման գործում: Նրանք  
ռազմագերիներին բաժանել եյին մի քանի խմբերի և  
տեղավորել նույն գորանոցում թե վոշուտ, բժավոր տի-  
ֆոյ հիվանդ ռազմագերիներին և թե վոշուտ, բայց ա-  
ռողջ գերիներին: Առողջ գերիներն սկսել եյին մեկը  
մյուսի հետևից հիվանդանալ բժավոր տիֆոյ: Մի այլ  
գորանոցում նրանք տեղավորել եյին բժավոր տիֆոյ հի-  
վանդ, բայց վոշիլներից մաքրված գերիներին առողջ  
գերիների հետ միասին, բայց դարձյալ վոշիլներից մա-  
քրված: Յեւ վորովհետև դրանց բոլորի վոշիլները նա-  
խապես վոչնչացված եյին, ուստի և այդ յերկրորդ գորա-  
նոցում նոր բժավոր տիֆի դեպքեր չեյին նկատվել:

Յուրգենսը պարզեց այն խնդիրը, վոր պատերազմից  
շատ առաջ պարզել եր գիտնական Նիկոյը:

Բժավոր տիֆի վարակն անցնում ե ուրիշին և տա-  
րածվում ե, առաջին հերթին ու գլխավորապես, մարմնի  
(հագուստի) վոշիլի միջոցով:

Վորոշ տվյալների համաձայն, բժավոր տիֆի տա-  
րածման գործում դեր են խաղում նաև գլխի մազոտ մա-  
սերում ապրող վոշիլները (գլխի վոշիլ), թեև այդ դերը  
շատ աննշան ե համարվում:

Յերբ հագուստի (մարմնի) վոշիլը կծում ե բժավոր  
տիֆոյ հիվանդ մարդուն և ծծում նրա արյունը, այդ ա-  
րյունը վարակի հետ միասին անցնում ե վոշիլի ստամոքսը:  
Ստամոքսում վարակը (մանրէները) մնում ու բազմանում

ե: Վոշլի կծելուց 2—3 որ անցնելուց հետո (այդ ժամանակամիջոցում վարակը բազմանում է վոշլի ստամոքսում), յերբ այդ վոշլիը կծում է մի այլ առողջ մարդու, նա այդ մարդուն վարակում է բժավոր տիֆով: Վարակը վոշլի ստամոքսից անցնում է վոշլի թքագեղձերը և յերբ վոշլիը կծում է մարդուն և կծելու ժամանակ մաշկի մեջ քիչ թուք է բաց թողնում, վորպեսզի արյունը ծծելիս մակարդվի և անցնի ստամոքսը, այդ ժամանակ վոշլի թքի հետ միասին մաշկի մեջ է անցնում և բժավոր տիֆի վարակը:

Վոշլին արագորեն է բազմանում և կարճ ժամանակում նրա թիվը մեծ չափերի յե հասնում: Շատ կարճ ժամանակում հաղարավոր վոշլիներ են առաջանում: Յերբեմն չափազանց առատ վոշլոտության դեպքում մարմնի մաշկը ծածկվում է մի նոր մաշկով, կազմված հազարավոր վոշլիներից:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր վոշլիը մեր ահեղ և վտանգավոր թշնամին է: Նրա դեմ պետք է կրուվել: Դա անհրաժեշտ է, վորովհետև այլ կերպ անհնարին է պայքարել բժավոր տիֆի դեմ, իսկ վորպեսզի կարողանանք կռվել այդ թշնամու, այսինքն վոշլի դեմ—պետք է ճանաչենք նրան, ծանոթանանք նրա կյանքին:

Վոշլիները տիպիկ պարազիտ միջատներ են և պատկանում են հողավորների դասին:

Վոշլիներից մեկ հետաքրքրում են՝ գլխի, հագուստի, մարմնի և ցայլքի վոշլիները, նրանք չափազանց արագ են բազմանում:

Բնազես Լեվենհուկն իր գուլպայի մեջ յերկու եզ վոշլիներից յերկու ամսվա ընթացքում աճեցրել էր 18 հազար վոշլի, իսկ ըստ պրոֆ. Պավլովի, մի վոշլից, նրա ամբողջ կյանքի ընթացքում, ստացվում է 4160 հատ:

Մարդու գլխի մազերում, կամ նրա շորերի մեջ շատ կարճ ժամանակամիջոցում կարող է այնքան վոշլի առաջանալ, վոր սովորական միջոցներով նրանցից ազատվելու վոշ մի հնարավորություն չի լինի: Վոշլիներն իրենց ամբողջ կյանքն անց են կացնում մարդու վրա, դա նրանց մըշտական բնակավայրն է: Այնինչ փայտոշլիներն ու լվերը, սովորաբար մարդու վրա չեն ապրում, այլ այցելում են նրան միայն սնունդ ստանալու նպատակով:

Վոշլիների աճը կատարվում է կենսաբանական թերատ կերպարանափոխությամբ, եզը դնում է ձվիկներ (անիծներ), վորոնցից դուրս են գալիս վորդեր, վորդն ել առանց հարսնյակ դառնալու կերպարանափոխվում է սեռահասուն վոշլի: Միջին հաշվով վոշլիներն ապրում են 30-ից մինչև 50 տարի և հագուստի (շորի) գլխի վոշլիների շարժման մաքսիմումը մեր դիտողությունների համաձայն 1—2 բուպեյում հասնում է մինչև 25—40 սմ, իսկ պրոֆ. Պավլովսկու տվյալների համաձայն 25 սմ մեկ բուպեյում: Բոլոր վոշլիներն ել ինչպես արյունառուշտներ, սնվում են արյունով, վորի համար գործ են դնում իրենց, այսպես կոչված խայթոցը (բերանի մասերը), վորով ծակում են մաշկը: Նկատի առնելով, վոր վոշլի խայթոցը միացված է թուքարտադրող գեղձերի հետ, արյուն ծծելու գործողության միջոցին արյունը խառնվում է թքի հետ, իսկ թուքն այն հատկությունն ունի, վոր չի թողնում արյունը մակարդվի: Յուրաքանչյուր մեկ վոշլի որվա ընթացքում մարդուն կծում է միջին հաշվով յերկու անգամ:

Վոշլիը յերբ կուշտ է, խուսափում է լույսից, ջրի մեջ վոշլիը կենդանի կարող է մնալ 24 ժամ: Պետք է յենթադրել, վոր վոշլիները գուրկ չեն հոտառությունից, նրանց վերաբերմունքը դեպի վորոշ քիմիական հոտավետ նյութերը բացասական է, ինչպես որինակ, դեպի նաֆթա-

լինել, նաֆթոլիզոլը, գլխի վոշիլը բեզմափորումից 10—20  
որ հետո որական միջին հաշվով դնում ե 4—5 անիծ,  
իսկ հագուստի վոշիլը 5—12:

Գլխի ու հագուստի վոշիլները անիծներից (ձվիկ-  
ներից) դուրս են գալիս փորդեր, փորոնք իրենց ձևով  
չափազանց նման են վոշիլին, բայց դեռ սեռականորեն  
հասունացած չեն: Վորդերն ել անվում են արյունով  
(ծծում են): 12—18 որ անց, փորդը 3 կաշեթափումից  
հետո դառնում ե սեռահասուն վոշիլ: Վոշիլը սոված վի-  
ճակում կարող ե մնալ միքանի որ: Առանց սնվելու տաք  
պայմաններում ավելի քիչ ե ապրում, քան առանց սնըն-  
դի (արյան) ցուրտ պայմաններում: Հայտնի յե, վոր ցուրտ  
պայմաններում, նույնիսկ 0-ից 10—12 աստիճան ցածր  
վոշիլը չի սատկում, միայն փայտանում ե և տաք տեղ  
ընկնելով, նորից կենդանանում:

Հետաքրքրական ե և պետք ե հիշել, վոր բծավոր  
տիֆով հիվանդի մարմնի վրա բարձր (39—40) ջերմաս-  
տիճանում վոշիլներն իրենց լավ չեն զգում, այդ պատ-  
ճառով նրանք հեռանում են տիրոջից, նոր մարդ վորո-  
նում և վարակն իրենց հետ տանելով վարակում ուրիշնե-  
րին: հետևաբար պետք ե շատ զգուշ լինել վոշտո  
հիվանդներից, յեթե նրանք հիվանդ են բծավոր տիֆով:  
Այնուհետև հայտնի յե, վոր դիակի վրա նմանապես վո-  
շիլ չի մտում (սառն ե գիակը), նրան արյուն ե հարկավոր  
աննդի համար, բացի դրանից, դիակի ջերմաստիճանն ել  
անհամապատասխան ե վոշիլների կյանքի համար: Հեռա-  
նալով բծավոր տիֆից մահացածի դիակի վրայից, վոշիլը  
նոր տեղ ե վորոնում և գտնելով այդպիսին՝ վարակում ե  
նրան:

Բծավոր տիֆը վոշնչացնելու համար պետք ե վերա-

ցնել վոշտոթյունը բնավ չպետք ե սպասել բծավոր  
տիֆի յերևալուն և հետո միայն զբաղվել վոշիլների  
վոշնչացման գործով: Անհրաժեշտ ե այժմ եթե, յերբ  
մեզանում բծավոր տիֆի համաճարակ չկա, մի շարք  
կանխիչ միջոցառումներ կիրառել և առաջին հերթին ձեռ-  
նարկել վոշիլների վոշնչացման գործին:

Վոշտոթյան դեմ պայքարելու գործում մեր այժմե-  
ական և հրատապ խնդիրներից մեկը բաղնիքներ կա-  
ռուցելն ե: Քաղսորհուրդներն ու շրջագործկոմները տե-  
ղական սանիտարական կազմակերպության հետ միասին  
պետք ե ամեն կերպ աշխատեն ավելացնելու բաղնիքների  
թիվը: Հաճախ մեզանում կառուցվում են այնպիսի բաղ-  
նիքներ, վորոնք չեն բավարարում սանիտարական պա-  
հանջներին, վորպեսզի մենք կարողանանք համաճարակի  
ժամանակ ռացիոնալ կերպով ոգտագործել բաղնիքները,  
անհրաժեշտ ե, վոր նրանք ի միջի այլոց, բավարարեննաև  
մի պահանջ, այն ե՝ բաղնիքները լինեն միջանցիկ տիպի  
իրենց կից ախտահանիչ կամերաներ ունենան: Այս-  
պիսի բաղնիքում լողացողը հանվում ե մի սենյակում,  
իսկ լողանալուց հետո հազնվում մի ուրիշ սենյակում,  
լողանալու ժամանակ, լողացողի հագուստը հանվելու սեն-  
յակից հանձնվում ե զեղինֆեկցիոն կամերա, վորտեղից  
ախտահանման յենթարկված մաքուր հագուստը արվում  
ե հազնվելու սենյակը:

Յեղած բաղնիքները պետք ե մաքուր պահել և  
պարբերաբար զեղինֆեկցիա (միջատների վոշնչացում)  
կատարել այնտեղ:

Այն վայրերում, ուր բաղնիքներ ու լվացքատներ  
չկան, պետք ե լավ հիշել, վոր համենայն դեպս լողանալն  
անհրաժեշտ ե, վորովհետև այլապես մենք կարող ենք  
վոշտովել: Վոշիլներից ազատ մնալու համար անհրաժեշտ

ե գոնե 10—15 որը մեկ անգամ լողանալ և ամեն անգամ լողանալուց հետո մաքուր սպիտակեղեն հագնել, այլապես լողանալը իզուր կանցնի:

Լողանալ կարելի չէ և տանը, միայն թե լինի ցանկություն և մաքուր լինելու անհրաժեշտության գիտակցություն: Սպիտակեղեն և անկողին վանալու, ինչպես և լողանալու համար, պարզ է, վոր անհրաժեշտ է ոճառ գործածել:

Միայն մաքրությամբ և խելացի սանիտարական ուժեղում կարելի չէ հեշտությամբ վերջ տալ վոջիլներին: Մաքրությունը վոջիլների թշնամին է: Պարզ է, վոր վոջլոտության դեմ արմատական պայքար մղելու համար պետք է ունենալ հետևյալ յեռյակը՝ շուր, սպիտակեղեն և ոճառ:

Մարդուն վոջիլներից ազատելու համար անհրաժեշտ է վոջնչացնել վոջ միայն մարմնի, գլխի, այլ և սպիտակեղենի, շորերի ու անկողնի մեջ գտնված և նույնիսկ բնակարանի վոջիլները (չափազանց վոջլոտության դեպքում):

Նկատի ունենալով, վոր բարձր ջերմության ազդեցության տակ վոջիլներն ու նրանց ձվիլները վոջնչանում են, այդ միջոցի նպատակահարմար գործադրությամբ կարելի չէ լավ հեռանալների հասնել: Այդ նպատակի համար գոնազան տաքացնող ապարատներից մենք խորհուրդ կտայինք ընտրել բանվորական շրջանների, ՄՏԿ, խորհրանտեսությունների, կոլտնտեսությունների համար վոջիլ վոջնչացնող կամերաները (համապատասխան ցուցմունքների համար դիմելով տեղի առբաժնին):

Վոջլոտության դեմ պայքարելու մի լավ միջոց էլ՝ դա սնդուկի նման մի արկղ է, վորը գերմետիկ կերպով փակվում է և ներսում բենզին է գործադրվում (չպետք

ե մոռանալ, վոր բենզինը կրակից շուտ բռնկվող մի նյութ է): Այդ բենզինի արկղների գործածությունն առավելապես նպատակահարմար է փոքրիկ բուժասնիտարական հիմնարկներում, բանվորական փոքրիկ բարակներում և գյուղացիական փոքրիկ տնտեսություններում: Վոջիլները վերջացնելու վերաբերյալ լաբորատորական մեր փորձերը ցույց տվին, վոր բենզինի գոլորշին վերցրած 0,5 կամ ամենաշատը մեկ խոսանտիմետր քանակով (1000 խոս մի լիտրում) շատ կարճ ժամանակամիջոցում բոլորովին վոջնչացնում է վոջիլները ու նրանց անիծք: Այդ նպատակի համար բավական է ունենալ մի խորանարդ մետր ծավալով և գերմետիկ կերպով փակվող մի արկղ և այնպես շինված, վոր տախտակներն արանքներ և անցքեր չունենան (ցանկալի չէ, վոր արկղը ներսից ցինկով պատած լինի): Արկղի հատակի մի անկյունում դրված է ամանի մեջ լցրած բենզին և ծածկված մետաղյա ցանցով, վերևում նշված չափով (1—1000) նոսր կերպով դրվում են արկղի մեջ շորերը կամ սպիտակեղենը և թողնում 2—3 ժամ:

Այդ միջոցը տեխնիկական գործադրման տեսակետից չափազանց պարզ է: Պետք է յենթադրել, վոր այս մատչելի, եժան և հուսալի միջոցը գործադրման լայն տարածում կունենա: Շատ լավ է ներդրոծում վոջիլների ու անիծների վրա և սովորական նավթը (շորերը կամ սպիտակեղենը նավթի մեջ թրջելիս, կամ նրանց վրա նավթ սրսկելիս, վոջիլներն ու անիծներն վոջնչանում են 1—2 րոպեյից հետո): Սպիտակեղենը և անկողնու պարագաները վոջիլներից ազատելու համար չափազանց հասարակ ու արմատական միջոց է նրանց մոխրաջրով յեփ տալը: Վոջիլներն ու նրանց չափազանց դիմացկուն ձվիլները յեռացող ջրի մեջ արագությամբ վոջնչանում են՝ վերնա-

զգեստը և առհասարակ այն իրերը, վորպիսիք յեփ տա չի կարելի և բենգինի արկղով ոգտվելու հնարավորությունը չկա, նպատակահարմար ե վոջիլներից մաքրել քիմիական զանազան նյութերով թրջված կոշա խոզանակով՝ այդ նյութերից, իրենց եժանության և ախտահանական տեսակետից, լավ ե ոճառակրեզոլյան պրեպարատները, վորոնք շատ կարճ ժամանակամիջոցում վոհնչացնում են միջատներին: Այսպես որինակ, կրեզոլիան նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթի մեջ թրջված սպիտակեղենի վոջիլներն ու անիծները բոլորովին վոհնչանում են: Ինչպես վերևում ասվեց, նավթալիզոլի ամենալավ լուծույթը նրա 10 տոկոսային լուծույթն ե—սակայն կարելի յե գործադրել 2—5 տոկոսանի լուծույթը, սրակելու միջոցով: Թե սրակումը (պուլվերիզացիա) և թե մեքենայական մաքրումը պետք ե կատարել խնամքով և մեծ զգուշությամբ:

Այդ լուծույթն ավելի լավ ե ներգործում և պետք ե գործադրել, քանի դեռ տաք ե: Սպիտակեղենը ախտահանման յենթարկելու համար սուզում են տաշտի մեջ, ուր լցված ե նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթը: Հետո սպիտակեղենը, վորքան հնարավոր ե, ուժեղ կերպով քամում են: Միևնույն լուծույթով կարելի յե ոգտվել 3—4 անգամ: Ուր դա հնարավոր ե՝ սպիտակեղենը, անկողնու պարագաները և այլն պահում են նավթալիզոլի մեջ ավելի յերկար ժամանակ, վորով հնարավորություն ե ստեղծվում գործածել անիծների ու վոջիլների վոհնչացման համար նավթալիզոլի ավելի թույլ լուծույթներ, այն ե՝ 3 և 5 տոկոսային լուծույթը: Նավթալիզոլի 3 տոկոսային լուծույթներում վոջիլները վոհնչանում են մոտ յերկու ժամվա ընթացքում, 5 տոկոսային լուծույթում վոջիլները վոհնչանում են մոտ

կես ժամվա ընթացքում, իսկ 10 տոկոսային լուծույթում՝ 10—15 րոպեյում: Ինչպես վերևում ասվեց, շորերը վոջիլներից ազատելու համար կարելի յե գործածել մեքենայական մաքրում: Մաքրումը պետք ե կատարել մեծ խնամքով, խոզանակի միջոցով, վորը պետք ե թրջել նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթի մեջ՝ յեթե խոզանակ չկա, կարելի յե ոգտվել վորևե փալասի կտորով: Նույնչափով ազդող, բայց թանգարժեք միջոց ե լիզոլը, վորը գործ ե ածվում հաճախ 1—3 և հազվագյուտ դեպքում 5 տոկոսային լուծույթների ձևով: Մարմնի մազոտ մասերում գտնվող վոջիլներից ազատվելու համար ամենահիմնական միջոցն ե մազերի հեռացնելն ու մաքրելը: Յեթե այդ միջոցը գործադրելու հնարավորություն չկա, այդ դեպքում վոջիլներն ու անիծները բենգինով են վոհնչացնում:

Բենգինի մեջ թաթախած մի շորի կտորով պետք ե լավ թրջել մարմնի մազոտ մասերը: Կարելի յե նույնպես բենգինով կոմպրես դնել գլխի վրա 10 րոպե տեվողությամբ: Այդ ժամանակամիջոցում վոհնչանում են թե վոջիլները և թե անիծները, լավ ե ներգործում նաև մի շատ եժան միջոց՝ քացախը, վորով թրջում են մազերը լվանալուց առաջ: Նա լուծում ե անիծների սոսնձային նյութը, վորով նրանք կպած են լինում մազերին:

Մնացած բազմաթիվ միջոցների վրա մենք կանգ չենք առնում, նրանք բոլորն ել հիմնականում նույնն են, ինչ վոր ասացինք վերևում: Հարկավ, յեթե շրջանում գոյություն ունի ախտահանման շոգեկամերա, մետաղյա շոգեֆորմալինային կամերա, առաջին հերթին պետք ե ոգտվել նրանից, վորովհետև դեղկամերան վոչ միայն վոհնչացնում ե միջատներին, այլև սպանում զանազան հիվանդությունների միկրոբներին:

Բարակներում և այլ տեղերում, ուր շատ և տարածված վոլյոտուլթյունը, նպատակահարմար միջոց է բնակարանը ծծումբով ծխելը՝ այդ նպատակով գործ են ածում ծծումբի կտորները (կարելի յե և փոշի), ծծումբը վերցնում են 50-ից մինև 100,0 յուրաքանչյուր խոր մետրի համար և վառում:

Ծծումբ գործածելիս պետք է հիշել, վոր նա վտանգավոր է կրակի տեսակետից, ուստի և պետք է զգուշանալ հրդեհից: Այդ պատճառով թավաների, մաղալների և այլ սարքավորումների վրա ծծումբ վառելիս հարկավոր է մինչ այդ նրանց տակը ցանել մոտ 5 ս-մետր հաստությամբ նախապես թրջած ավազ: Ավազը պետք է ցանել վոշ միայն մաղալի տակը, այլև նրա շուրջը, 70—80 սանս. լայնությամբ: Ծծումբը վառելուց հետո (սենյակը փակված է մնում 12—24 ժամ) սենյակը լավ ողափոխել: Ծծումբը գործածել բժշկի (բուժակի) ղեկավարությամբ կամ ղեկինֆեկտորի ոգնությամբ:

Վերևում հիշված բոլոր միջոցների գործադրումը վոշ մի հետևանքի չի հասցնի, յեթե միջոցներ ձեռք չառնվեն վերացնելու կենցաղային այն պայմանները, վորոնց շնորհիվ առաջ են գալիս ու զարգանում վոշիլները, այլապես վոշիլները նորից առաջ կգան: Պայքարը վոշիլների դեմ պետք է վարել սխտեմատիկ և համառ կերպով, միաժամանակ չմոռանալով առաջարկված միջոցները մատչելի դարձնել աշխատավորությանը և վերջիններին լայնորեն մասնակից դարձնել միջատների դեմ տարվող պայքարին:

Հանրակացարաններում և ընդհանուր բարակներում ապրող մարդիկ (բանվորները, ուսանողները և այլն) վոշլոտության դեմ պետք է միջոցներ ձեռք առնեն կազմակերպված և միասնաբար, այլապես վոշիլը մեկից կարող է անցնել մյուսին և այսպիսով նորից առատ վոշլոտություն առաջացնել:

Բացի վոշլոտության դեմ կիրառվող հիշյալ ձեռնարկումներից, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի շարք այլ մանր միջոցների վրա, վորոնք եյապես կարևոր նշանակություն ունեն: Այսպիսի միջոց է որինակ այն, վոր պետք է հրաժարվել միասին պառկելուց, մի սովորություն, վորը դժբախտաբար դեռ բոլորովին վերացած չէ մեր կենցաղից:

Այդ տեսակետից առանձնապես վտանգավոր է գյուղական կենցաղում նկատվող յերևույթը, վոր ընտանիքի բոլոր անդամների անկողինները մի տեղում են դարսվում: Յեթե դրան ավելացնենք և այն, վոր անկողնու մի մասից ոգավում են յեկվոր հյուրերը, ապա վոշիլներով վարակվելու վտանգն էլ ավելի ակնհայտ կգառնա: Այնուհետև չպետք է յերկար մազեր, մուրուք թողնել, վորովհետև ինչպես մեզ հայտնի յե, մազերը հաճախ վոշիլների համար հարմար ապաստան են հանդիսանում: Մազերը պետք է կարճ խուզել:

Վոշլոտության, հետևաբար և բժավոր տիֆի դեմ հաջողությամբ պայքարելու համար անհրաժեշտ է նաև խիստ մաքրություն պահպանել Գյուղացու Տներում, հյուրանոցներում, իշեփաններում, ուր մարդիկ են գալիս գանազան տեղերից, վորոնց մեջ լինում են և վոշլոտ և վոշ վոշլոտ մարդիկ: Այդպիսի տեղերը կարող են հեշտությամբ վարակի ոջախ դառնալ: Ուստի և հիշյալ տեղերում, յուրաքանչյուր հաճախորդից հետո անկողնու պարագաները պետք է անպայման փոխել և մինչև լվանալը ախտահանության յենթարկել, իսկ թե ինչպես ախտահանել, այդ մասին պետք է հարցնել սանիտարական բժշկին: Բժավոր տիֆի դեմ կանխիչ միջոցներ ձեռք առնելու տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում սեզոնային բանվորները, վորոնք նախքան աշխատանքի

անցնելը, պետք է սան՝ մշակման յենթարկվեն (մաղերի խուզում, բաղնիք, սպիտակեղենի փոխում, թարմ անկողին), նույնպիսի կարգ պետք է սահմանվի և մեր գործարաններում, ֆաբրիկներում, ձեռնարկություններում, նորակառույցներում, խորհանտեսություններում, վորտեղ աշխատանքի յեն ընդունվում նոր բանվորներ:

Մանկական հիմնարկներում (ղլրոց, մանկապարտեզ, մսուր, կոնսուլտացիա, և այլն) պետք է առանց հետաձգելու բոլորովին արմատախիլ անել վոջլոտության դեպքերը: Վոջլոտ աշակերտին պետք է ուղարկել ծնողի մոտ և պահանջել, վոր վերջինս մաքուր պահի իրեն յեբեխաներին: Այդ տեսակետից մեծ է պիտոներ կազմակերպության դերը և շատ ոգտակար կլինի այն, վոր յեբեխաներին պարբերաբար քննեն վոջլոտություն հայտնաբերելու նպատակով: Նման ձեռնարկումները, կրկնում ենք, հսկայական ոգնություն կհասցնեն վոջլոտության դեմ պայքարելու գործում:

Անկասկած մեր հիվանդանոցները և առողջապահական հիմնարկներն իրենք ևս պետք է պատշաճ բարձրության վրա կանգնած լինեն: Մեր հիվանդանոցները պետք է միշտ ազատ լինեն վոջլիլներից, վորովհետև բուժական և առողջապահական նպատակներից զատ, պետք է որինակ լինեն շրջապատողների համար՝ որինակելի ու մաքուր հիվանդանոցից տուն գնացող հիվանդը կփոխի իր կենցաղը:

Վերը բերված բոլոր ձեռնարկումների իրականացումն ի հարկե, սկզբում դժվար կլինի, բայց այդ բոլորը միանդամայն հնարավոր և անհրաժեշտ է: Պետք է համառորեն ու պարբերաբար մաքրվել վոջլիլներից, այլապես կլինի վոջլոտություն, հետևապես կլինի նաև բժավոր տիֆ: Յեթե վոչ այսոր, ապա վաղը, այդ հյուրը՝ բժավոր


տիֆը մուտք կգործի մեզ մոտ, այն ժամանակ մենք կտուժենք, այն ժամանակ գուցե արդեն ուշ կլինի շատերի համար:

Բայց ինչ պետք է անել, յեթե այս կամ այն ձանապարհով բժավոր տիֆը մուտք գործի մեզ մոտ: Յեթե նա արդեն մուտք է գործել, ապա վախենալու, գլուխ կորցնելու կարիք չկա: Պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բժավոր տիֆը վոչնչացվի տեղն ու տեղը: Վորոնք են այդ միջոցները:

Ամենից առաջ չպետք է թագցնել բժավոր տիֆի դեպքերը: Յուրաքանչյուր նոր դեպքի մասին պետք է անմիջապես հայտնել տեղական բժիշկներին, սանիտաբական բժշկին: Տեղեկացնելով այդ մասին առբաժնին, մենք ժամանակին լիվլիդացիայի կյենթարկենք այդ վարակը: Վարակի տեղն յեկած բժիշկն անմիջապես կպարզի՝ թե վորտեղից է առաջացել այդ վարակը և ել ում կարող է նա վարակել: Հիվանդին շրջապատողները, վորոնց կծել է բժավոր տիֆով հիվանդի վոջիլը, կարող են հիվանդության դեռ գաղտնի շրջանում լինել, ուստի և բժիշկը նրանց իր հսկողության տակ է առնում 14 որ շարունակ: Յերբ բժիշկը դիագնոզ է դնում և գտնում է, վոր հիվանդությունը բժավոր տիֆ է, նա իսկույն այդ հիվանդին տեղափոխում է մի առանձին հիվանդանոց, վորտեղ մասնագետ բժիշկները հիվանդին բժշկում են այնպես, ինչպես հարկն է, գործ դնելով բոլոր անհրաժեշտ միջոցները, միաժամանակ ախտահանում այն տունը, վորտեղից հիվանդը բերված է հիվանդանոց, այլապես հիվանդը մնալով իր տանը, կարող է վարակել իր ընտանիքի մյուս անդամներին, հարևաններին, այցելուներին և շատ ուրիշներին:

Այդպես է բժավոր տիֆը: Վոջլիլների ու բժավոր

տիֆլիզեմ կոմիտեու անհրաժեշտութիւնը պարզ ու հասկանալի յե: Սորհրդային առողջապահութիւնը ձգտում է վոչ միայն բժշկել հիվանդին, յերբ նա արդեն վարակվել ու հիվանդացել է, այլ նա առաջին հերթին և գլխավորապէս ձգտում է կանխել հիվանդութիւնը: Բժավոր տիֆ կանխելը վոչլոտութիւնը վերացնել է նշանակում: Յեթե չկա վոչիլ, չկա նաև բժավոր տիֆ: Կարելի յե և պատվաստումներ անել բժավոր տիֆի դեմ՝ չհիվանդանալու համար, բայց դա դժվարին ու պայքարի վոչ այնքան հուսալի միջոց է: Բժավոր տիֆի դեմ պայքարելու ամենահուսալի միջոցը, վոչիլներին վոչնչացնելն է:



« Ազգային գրադարան



NL0267722

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

123

6541

Доцент А. Б. АЛЕКСАНИЯ

## Сыпной тиф

Изд. Сан. Просвет. отд. НКЗдрава Арм. ССР  
ЕРЕВАН 1937